ՓԱՐԻԶԻ ԿՐԹԱՍԵՐ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԼԳՈՆՅԱՆԻ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՀԱՐՑՈՒՄ ԽՆԴՐՈՒՄ Է ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

ՓԱՐԻԶ, 8 ԱՊՐԻԼԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Փարիզի Կրթասեր միությունը գրավոր դիմում է հղել Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ խնդրելով Նորին սրբությանը ազդել Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատության շենքը վաճառելու եւ վարժարանը փակելու Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Կենտրոնական վարչության որոշման վրա: Միության դիմումը, որ ստորագրվել է փարիզահայ Վարդան Օզինյանի կողմից, հիշեցնում է, թե Մելգոնյանը որքան կարեւոր հաստատություն է համայն հայության համար, եւ որքան էլ ժամանակները փոխվեն ու հայ ժողովուրդը նոր հրամայականներին դեմ-հանդիման մնա, Մելգոնյանի պես վարժարանը չպետք է փակվի: Հայոց կաթողիկոսը, նշված է փաստաթղթում, լավագույն ու բարձրագույն խոսակիցն է ՀԲԸՄ Տնօրենների կենտրոնական խորհրդի: Կրթասեր միությունը Վեհափառ հայրապետին խնդրում է միջամտել եւ անձեռնմխելի դարձնել Մելգոնյան կրթական հատատությունը: Ինչպես գրում է Ստամբուլի «Մարմարա» օրաթերթը, դիմումի հեղինակները նկատում են նաեւ, որ 350 հայտնի մտավորականների ստորագրությամբ նամակ է ուղարկվել Կիպրոսի հունական մասի նախագահ Տասոս Պապադոպուլուսին, որին եւս խնդրել են միջամտել եւ ազդել ՀԲԸՄ Կենտրոնական վարչության որոշման վրա, արգելք հանդիսանալ Մելգոնյանի շենքի վաճառքին: Ընդգծելով, որ Մելգոնյանը պատկանում է ոչ միայն Կիպրոսի հայերին, այլեւ 180 երկրներում բնակություն հաստատած հայ ժողովրդին, նամակի հեղինակները հայտարարում են, որ ՀԲԸՄ ղեկավարությունն իրավունք չունի Մելգոնյանի շենքը վաճառել եւ գոյացած գումարները «քաղաքական բնույթի» այլ նպատակների ծառայեցնել: